

**«2819 ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**«ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՓՈՐՁԱԳԵՏ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՄՈՂՈՒԼ ՓԱ/ՓԲ2-07-003

**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՍՏՈՒՄ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»**

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Իմանալ պարենամթերքի ստանդարտացման, համապատասխանության հավաստման, չափագիտության և որակի կառավարման համակարգերը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում դրանց կիրառման տեխնիկան: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կիմանա ստանդարտացման, սերտիֆիկացման, չափագիտության հիմնական դրույթները, որակի կառավարման համակարգերի համար նախատեսված միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև ձեռք կրերի փորձաքննության ընթացքում դրանց կիրառման կարողությունը:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 62 ժամ դասախոսություն
28 ժամ գործնական պարապմունքներ

ՍՈՂՈՒԼԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԱՐԺԵԸ՝ « 2.5 »

ԱՐԳՅՈՒՆԸ 1. ԻՍԱՆԱԼ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * տեսաֆիլմեր
- * պաստառներ

Թեմա 1.

Ստանդարտացման էությունը և դերը տնտեսության զարգացման մեջ:

Ստանդարտացումն իր բնույթով և էությամբ տնտեսության զարգացման այնպիսի արմատական հարցերի լուծման արդյունավետ միջոց է, ինչպիսիք են՝ արտադրանքի որակի և տեխնիկական մակարդակի բարձրացումը, աշխատանքի արտադրողականության աճը, բոլոր տեսակի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Ստանդարտացման բնույթը առարկաների ու երևույթների կարգավորումն ու միասնականացումն է: Ստանդարտացման դերը նրա կարգավորող համակարգային հատկություններն են, որոնցով ապահովվում են ուղղակի կամ միջնորդավորված կապի մեջ գտնվող առարկաների, երևույթների, գործընթացների չարդարացված բազմազանության կրճատումը և դրանց համատեղելիությունը: Ստանդարտացման կարգավորող և համակարգող հատկություններն իրենց արտահայտությունն են գտնում նորմատիվ փաստաթղթերի մշակումներում (չափագիտության մեջ որպես էտալոնային նմուշներ), որոնցով սանմանվում են արտադրանքի, գործընթացների և ծառայությունների անվտանգության և որակի օպտիմալ մակարդակներն ապահովող նորմեր, կանոններ, պահանջներ և բնութագրեր:

Թեմա 2.

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը, ստանդարտների տեսակները և դրանց կիրառումը:

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով սահմանվում են կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ գործունեության տարբեր ձևերի կամ դրանց արդյունքների վերաբերյալ: Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերն են՝ տեխնիկական կանոնակարգերը, ստանդարտները, դասակարգիչները, կազմակերպության ստանդարտները, տեխնիկական պայմանները: Ստանդարտների տեսակներն են. միջազգային՝ ընդունված ստանդարտացման աշխատանքներով զբաղվող Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից և մատչելի սպառողների լայն շրջաններին: Միջազգային կազմակերպությունների (ԻՍՕ,ՄԷ3) կողմից ընդունված ստանդարտների կիրառումը կանավոր է: Տարածաշրջանային ստանդարտներն ընդունված են ստանդարտացումով զբաղվող տարածաշրջանային մարմնի կողմից և մատչելի են սպառողների լայն շրջաններին: Միջպետական ստանդարտներն (ԳՕՍՏ) ընդունված են ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման համաձայնագրին միացած ԱՊՀ անդամ-երկրների կողմից: Ազգային ստանդարտներն ընդունված են ստանդարտացման ազգային մարմնի կողմից և մատչելի են սպառողների լայն շրջաններին, օրինակ.

- ✓ ՀՍՏ – ստանդարտ, որն ընդունված է ՀՀ ստանդարտացման ազգային մարմնի կողմից,
- ✓ Տեխնիկական պայմաններ՝ տեխնիկական պահանջներ սահմանող փաստաթուղթ, որոնց պետք է համապատասխանի որոշակի արտադրանքը, գործընթացը կամ ծառայությունը,
- ✓ Կանոնակարգ՝ փաստաթուղթ, որը պարունակում է իրավական նորմեր, ընդունված իշխանության մարմնի կողմից,

✓ Տեխնիկական կանոնակարգ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի (ծառայության) կամ դրա հետ կապված արտադրման գործընթացների և մեթոդների վերաբերյալ տեխնիկական բնութագրեր:

Կազմակերպության ստանդարտները մշակում և հաստատում են իրավաբանական անձինք: Իրացման ենթակա արտադրանքի համար կազմակերպության ստանդարտներ չեն մշակվում: Գործում են նաև հիմնադրական ստանդարտներ, արտադրանքի (ծառայությունների) ստանդարտներ, վերահսկման մեթոդների ստանդարտներ:

Միջազգային ուղեցույցին համապատասխան առաջարկվում են նորմատիվ փաստաթղթի կիրառման երկու հիմնական եղանակներ. անմիջական կիրառում համապատասխան բնագավառում (արտադրություն, փորձարկումներ, սերտիֆիկացում) և դրա վկայակոչումը մեկ այլ նորմատիվ փաստաթղթում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 1.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը

Թեմա 1

Իմանալ օրենքի գործողության ոլորտը, օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ստանդարտացման նպատակը և օբյեկտները: Բնութագրել ստանդարտացման սկզբունքները, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը, դրանց կիրառումը և տեղեկատվական ապահովումը:

«Ստանդարտացման մասին» օրենքը սահմանում է ստանդարտացման գործունեության իրավական հիմքերը և դրա մասնակիցների իրավասությունը, ինչպես նաև կանոնակարգում է տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքները: Օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. ստանդարտացում, ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթ, տեխնիկական կանոնակարգ, ստանդարտ, տեխնիկական պայմաններ, տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչ, ստանդարտացման ազգային մարմին, ստանդարտացման ազգային համակարգ, ստանդարտների ազգային ինստիտուտ, ռիսկի աստիճան:

Թեմա 2.

Իմանալ ստանդարտացման գործընթացի կազմակերպումը, ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը: Իմանալ պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար: Անցումային դրույթներ:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պատասխաններ
- * ստանդարտներ

Թեմա 1

Ժամանակակից ստանդարտացման տեսական բազան:

Ժամանակակից ստանդարտացման տեսական բազան նախընտրելի թվերի համակարգն է: Նախընտրելի թվեր են համարվում այն թվերը, որոնք առաջարկվում է ընտրել որպես մյուսների նկատմամբ առավելություն ունեցող նոր ստեղծվող արտադրանքների պարամետրերի մեծությունները ընտրելու ժամանակ: Նախընտրելի թվերը ստանում են երկրաչափական պրոգրեսիայի հիման վրա: Ստանդարտացման միջազգային կազմակերպության հանձնարարականների հիման վրա ստեղծված ԳՕՍՏ 8032 ստանդարտը սահմանում է նախընտրելի թվերի չորս հիմնական (R 5, R 10, R 20, R 40) և երկու լրացուցիչ (R 80 և R 160) շարք:

Թեմա 2

Հեռանկարային, համալիր և առաջանցիկ ստանդարտացում:

Հեռանկարային պահանջներով ստանդարտների ներդրումը ստեղծում է տնտեսական արդյունավետության ապահովման հնարավորություն, դրանք ապահովում են պատվիրատուի գիտականորեն և տնտեսապես հիմնավորված պահանջների առավել լիարժեք հաշվառումը, որոնողական, հիմնարար, կիրառական հետազոտությունների, կանխատեսումների, գյուտերի արդյունքների օգտագործումը: Հեռանկարային պահանջներով ստանդարտների մշակման նպատակն է հայրենական արտադրանքի մշակման և թողարկման պետական կառավարման՝ զարգացած երկրների մակարդակին համապատասխանող նորմատիվ և տեխնիկական բազայի ստեղծումը: Համալիր ստանդարտացումն ապահովում է պատրաստի արտադրանքի համատեղ արտադրության կից ծյուղերի փոխկապակցվածությունը: Այն ունի երեք գլխավոր մեթոդական սկզբունքներ. համակարգվածություն,

օպտիմալություն, ծրագրային պլանավորում: Ներկա պայմաններում արտադրանքի համալիր ստանդարտացման աշխատանքների գործնական կազմակերպման միջոցը համալիր ստանդարտացման ծրագրերի մշակումը և իրագործումն է: Ստանդարտներում ամրագրված արտադրանքի հիմնական պարամետրերը արագորեն հնանում են և պարբերաբար պետք է վերանայվեն, հաշվի առնելով երկարաժամկետ կանխատեսումները և գիտատեխնիկական առաջընթացի տեմպերը: Այս պահանջներին բավարարում է առաջանցիկ ստանդարտացումը, որը սահմանվում է արտադրանքի նոր մշակվող ստանդարտներում հեռանկարային պահանջների տեսքով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 2.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * Հայաստանի ստանդարտ ՀՍՏ 1.1, ՀՍՏ 1.5

Թեմա 1

Իմանալ ստանդարտացման տերմինները ըստ ՀՍՏ 1.1 ստանդարտի: Իմանալ ստանդարտացման նպատակները, նորմատիվ փաստաթղթերը, պատասխանատու մարմինները: Բնութագրել ստանդարտների ներդաշնակեցումը:

Թեմա 2

Նկարագրել նորմատիվ փաստաթղթերի բովանդակությունը, կառուցվածքը, մշակումը և կիրառումը: Նկարագրել կանոնակարգերում ստանդարտների վկայակոչումները, դրանց ճշգրտությունը` ՀՍՏ 1.5:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * ստանդարտներ

Թեմա 1

Ստանդարտացման աշխատանքների կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ-ում ստանդարտացման իրավական հիմքերը:

ՀՀ-ում ստանդարտացման իրավական հիմքերն ամրագրված են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքում, որը փոխկապակցված է ՀՀ այնպիսի օրենսդրական ակտերի հետ, ինչպիսիք են՝ «Համապատասխանության գնահատման մասին», «ՀՀ-ում չափումների միասնականության ապահովման մասին» օրենքները, «Տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման և կիրառման կարգը հաստատելու մասին» և «Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծման և ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության հավաստման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունները տեղեկատվությամբ ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները: Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ ԱՀԿ համաձայնագրով սահմանվում է ստանդարտների կամավոր կիրառումը և արտադրանքի որակի ու անվտանգության հարցերի կարգավորման օրենսդրական մեխանիզմների օգտագործման կարգը: ՀՀ-ում ստանդարտացման էությունը գործունեություն է, որը սահմանում է դրույթներ (կանոններ, պահանջներ, նորմեր ու բնութագրեր), որոնք պատք է ապահովեն ստանդարտացման նպատակների իրականացումը:

Թեմա 2

Ստանդարտացման ազգային համակարգը, ստանդարտացման գործընթացի մասնակիցները:

ՀՀ-ում ստանդարտացման ազգային համակարգն իրենից ներկայացնում է կառավարման բոլոր մակարդակներում ազգային ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված ստանդարտացման աշխատանքների կազմակերպման և վարման փոխկապակցված կանոններ և դրույթներ:

Ստանդարտացման գործընթացի մասնակիցներն են. ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները, պետական մարմինների ստանդարտացման ծառայությունները և կազմակերպությունների ստանդարտացման ծառայությունները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Ազգային ստանդարտների մշակման և ընդունման կարգը, ստանդարտացման բնագավառի տեղեկատվական ապահովումը:

Ազգային ստանդարտների ստեղծումը, այսինքն՝ մշակման ծրագրավորումից մինչև հրատարակումը իրականացվում է որոշակի հերթականությամբ. նախնական փուլ, ստանդարտի նախագծի մշակում (առաջին խմբագրություն), ստանդարտի նախագծի վերջնական խմբագրության մշակում, համաձայնեցում և ներկայացում ընդունման, ստանդարտի ընդունում և պետական գրանցում, ստանդարտի հրատարակում: Համապատասխան «Ստանդարտացման մասին» օրենքի, մշակվող և ընդունված տեխնիկական կանոնակարգերի, ազգային ստանդարտների և դասակարգիչների, ինչպես նաև արտադրանքի և ծառայությունների գրանցված տեխնիկական պայմանների մասին տեղեկատվությունն ապահովում է ստանդարտացման ազգային մարմինը:

Թեմա 2

Ստանդարտացման զարգացման նոր սկզբունքները և ուղղությունները և բնագավառի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ-ում ստանդարտացման բնագավառի զարգացման հիմնական սկզբունքներն են. տեխնիկական օրենսդրության (տեխնիկական կանոնակարգերի) ստեղծումը, ազգային ստանդարտների կիրառման կամավոր սկզբունքին անցնելը, ստանդարտացման ազգային համակարգում միջազգային փորձի լայնածավալ կիրառումը, ԱՊՀ անդամ-երկրների հետ ստանդարտացման աշխատանքների կատարումը, տեխնիկական հանձնաժողովների միջոցով ստանդարտների մշակման գործընթացին անցնելը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * կատալոգներ

Թեմա 1

Արտադրանքի գրագուցակավորման համակարգ:

Արտադրանքի գրագուցակավորման հիմնական խնդիրներն են. հանրապետությունում արտադրվող արտադրանքի անվանացանկի ավտոմատացված հաշվառումը, թողարկվող արտադրանքի և դրա բնութագրերի վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկատվությանը ապահովումը, կազմակերպություններին և այլ սպառողներին արտադրանքի, դրա հիմնական բնութագրերի, արտադրողների արտադրանքի, փաստաթղթերի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվությանը ապահովումը:

Թեմա 2

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգ (SSUS ԴԿ ՄՀ): SSUS ԴԿ ազգային համակարգը:

ՀՀ-ում դասակարգման և կոդավորման հիմնական նպատակները և խնդիրները, դասակարգման և կոդավորման աշխատանքների կազմակերպումը, դրան կատարման մեթոդներն ու սկզբունքները, այդ ոլորտում միջազգային, միջպետական համագործակցությունը կանոնակարգված են «Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգի» ստանդարտներով:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 6.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * կատալոգներ
- * դասակարգիչներ

Թեմա 1

Օբյեկտների դասակարգման և կոդավորման եղանակները:

Դասակարգումը և կոդավորումը հնարավոր են դարձնում մեկ կողային կազմավորման միջոցով միանշանակ որոշել դասակարգչային խմբակցությունը կամ որոշակի հատկանիշներով օժտված դասակարգվող օբյեկտը: Օբյեկտների դասակարգման մեթոդներն են հիերարխիականը և երեսակայինը: Կողային նշագիրը բնութագրվում է կողի այբուբենով, կառուցվածքով, երկարությամբ (նիշերի քանակով, մեթոդով): Կոդավորման մեթոդներն են. հաջորդական, զուգահեռ, հերթական և սերիական-հերթական:

Թեմա 2

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դասակարգիչները:

Հայաստանի հանրապետությունում կիրառվում են հետևյալ դասակարգիչները. «Ստանդարտների դասակարգիչ», «Երկրների անունների դասակարգիչ», «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ», «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ», «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ», «Տարադրամի դասակարգիչ»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 3.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * Հայաստանի Հանրապետության դասակարգիչներ
- * SSUS ԴԿ ՄՀ

Թեմա 1

«Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգ» ստանդարտների, ՀԴ 001 «Ստանդարտների դասակարգիչ», ՀԴ 002 «Երկրների անունների դասակարգիչ». քննարկել և նշել դրանցից օգտվելու կարգը:

Սույն դասակարգչով սահմանված են ՄԱԿ վիճակագրական գործակալության կողմից սահմանված հիմնական տառային երկնիշ կոդերը (երկրի ԽՍՕ «Ալֆա-2» կոդը), տառային եռանիշ կոդերը(երկրի ԽՍՕ «Ալֆա-3» կոդը) և ռվային եռանիշ կոդերը (երկրի ԽՍՕ «Նումերիկ-3» կոդը) հատուկ նպատակների համար: Կոդերը նույնացնում են տեղեկատվության միջազգային փոխանակման զարգացման համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող երկրների, կախյալ երկրների և այլ տարածքների անունները և կարող են կիրառվել տեղակատվության փոխանակման ընթացքում միջազգային, տնտեսական, գիտական, մշակութային, սպորտային և այլ կապերի խնդիրները լուծելու ժամանակ: Սույն դասակարգիչը տեղեկատվություն չի պարունակում երկրի կամ տարածքի իրավական կարգավիճակի և դրանց կառավարման մարմինների մասին: Տառային երկնիշ կոդերը հանձնարարվում է օգտագործել միջազգային տեղեկատվության փոխանակման ժամանակ, հատուկ դեպքերի համար՝ տառային եռանիշ կոդերը, եթե այդպիսի կոդերի օգտագործումն ավելի ընդունելի է: Այն դեպքում, երբ նախընտրելի է թվային կոդը, պետք է օգտագործել եռանիշ կոդը՝ 000-899 շարքից («Նումերիկ-3»), որը գտնվում է ՄԱԿ վիճակագրական գործակալությունում: Սուբյեկտների կարծ անունների այբբենական ցանկը՝ պաշտոնական անուններով և կոդերով («Ալֆա-2», «Ալֆա-3», «Նումերիկ-3»), տրված է 1 աղյուսակում: Թվային եռանիշ «Նումերիկ-3» կոդերի ցանկը, դասավորված ըստ թվերի աճման կարգի, տրված է 2 աղյուսակում: Սուբյեկտների տառային երկնիշ «Ալֆա-2» կոդերի ցանկը, դասավորված լատինական այբուբենի հաջորդականությամբ, տրված է 3 աղյուսակում, տառային եռանիշ «Ալֆա-3» կոդերինը՝ 4 աղյուսակում:

Թեմա 2

ՀԴ 005.1 և ՀԴ 005.2 «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ», ՀԴ 003 «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ», MK 003-97 «Տարադրամի դասակարգիչ». նշել դրանցից օգտվելու կարգը:

«Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» դասակարգման օբյեկտներն են տնտեսական գործունեության տեսակները, որոն ողջ բազմությունը բաժանվում է հատվածների, խմբերի, դասերի և ենթադասերի: Տնտեսական գործունեության դասակարգիչը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում տրված են դասակարգման օբյեկտները համապատասխան կոդերով: Երկրորդ մասում տրված են տնտեսական գործունեության տեսակների պարզաբանումները:

«Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչը» կառուցված է եռաստիճան դասակարգման սկզբունքով, հիերարխիական մեթոդով: Դասակարգման առաջին աստիճանում դասակարգման խմբակցություններն են ՀՀ մարզերը և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքը: Դասակարգման երկրորդ աստիճանում դասակարգման խմբակցություններն են. մարզերում՝ համայնքները, Երևան քաղաքում՝ թաղային համայնքները: Դասակարգման երրորդ աստիճանում դասակարգման խմբակցություններն են. համայնքներում՝ բնակավայրերը, թաղային համայնքներում՝ թաղամասերը: Վարչատարածքային բաժանման միավորի կոդը ընդգրկում է 8 նիշ:

«Տարադրամի դասակարգիչն» ընդգրկում է տարադրամների կոդերի անվանացանկը, երկրների և տարածքների անվանումները: Տարադրամների կոդերի անվանացանկը պարունայշկում է տարադրամների եռանիշ թվային կոդերը՝ իրենց աճման կարգով, տարադրամների եռանիշ տառային կոդերը, տարադրամների, երկրների և տարածքների անվանումները: Դասակարգչում դասակարգման օբյեկտներն են ազգային տարադրամները՝ աշխարհի պետությունների և տարածքների դրամային միավորները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 7.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * տարբեր ապրանքներ
- * պաստառներ

Թեմա 1

Գծիկային կողավորման տեխնոլոգիան և դրա կիրառման ոլորտները:
 Գծիկային կողավորման տեխնոլոգիան ներառում է հետևյալ գործողությունները.
 ✓ օբյեկտների նույնականացում, տալով դրանց թվային, տառային կամ տառաթվային կոդ,
 ✓ գծիկային կոդի առարկայական տեղադրում ապրանքի, տարայի, փաթեթվածքի, պիտակի, փաստաթղթի վրա,
 ✓ գծիկային կոդի ընթերցում,
 ✓ գծիկային կոդի ապակողավորում մեքենայական ներկայացման համար պիտանի թվային, տառաթվային տվյալների տեսքով և դրա մուտքագրումը համակարգիչ:
 Գծիկային կողավորման կիրառման ոլորտներն են՝ արդյունաբերությունը, առևտուրը, տրանսպորտը, կապը, առողջապահությունը, գրադարանային և արխիվային գործը, պահեստային տնտեսությունը, գործավարությունը:

Թեմա 2

Գծիկային կոդերի տեսակները, պատրաստման, զետեղման և ընթերցման սարքերը:
 Տարբեր հնարավորություններով օժտված գծիկային կոդերի պայմանաշանների բազմազանության պայմաններում անհրաժեշտ է, որ դրանց կառուցման և բնութագրերը սահմանող ստանդարտները լինեն պարզ և հասանելի կիրառողների համար: Գծիկային կոդերի զետեղման սարքերից են տալիչները, որոնք տարբերվում են իրենց զանգվածով, չափերով և դիզայնով: Գծիկային կոդերի ընթերցման սարքերը բաժանվում են ընթերցիչների՝ առանց ներկառույց ապակողավորիչի (լուսային գրչածայր և ներկառույց ընթերցիչ) և ընթերցիչներ՝ ներկառույց ապակողավորիչով: Կիրառվում են նաև ձեռքի ավտոմատ ինքնավար (մարտկոցով աշխատող) և էլեկտրացանցին միացված ընթերցիչներ:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 8.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * տեսաֆիլմեր

Թեմա 1

Ստանդարտացման միջազգային և եվրոպական կազմակերպությունները (ԻՍՕ, ՄԷՅ, ՍԵՆ, ՍԵՆԷԼԵԿ):
 Ստանդարտացման միջազգային կազմակերպություններն են. ԻՍՕ-ն (ստանդարտացման միջազգային կազմակերպությունը) և ՄԷՅ-ը (միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովը): Ստանդարտացման եվրոպական կազմակերպությունները են ՍԵՆ-ը (ստանդարտացման եվրոպական կոմիտեն) և ՍԵՆԷԼԵԿ-ը (էլեկտրատեխնիկայի ոլորտում ստանդարտացման եվրոպական կոմիտեն):

Թեմա 2

Ստանդարտագումն Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրներում (միջպետական ստանդարտացում):
 ԱՊՀ երկրների շրջանակներում ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության ախտանքներն իրականացվում են 1992թ. «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրին համապատասխան: 1995թ. ԻՍՕ-ի խորհուրդը Միջպետական խորհուրդը ծանաչել է որպես ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպություն ԱՊՀ երկրներում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 9.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * տեսաֆիլմեր

Թեմա 1

Ստանդարտագումն արտասահմանյան երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Գերմանիա):
 ԱՄՆ-ում ստանդարտացման ազգային մարմինը ամերիկյան ստանդարտների ազգային ինստիտուտն է, Ֆրանսիայում ազգային ստանդարտացման կազմակերպությունը ֆրանսիական ստանդարտացման ընկերությունն է, Մեծ Բրիտանիայում՝ Բրիտանական ստանդարտների ինստիտուտը, Ճապոնիայում՝ արդյունաբերական ստանդարտների կոմիտեն, Գերմանիայում՝ ստանդարտացման ազգային կազմակերպությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊՐԱՊՍՈՒՆՔ 4.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը»
- * պաստառ՝ EAN կոդերի կառուցվածքը,
- * գծիկային կոդերի զետեղմամբ տարբեր ապրանքատեսակներ

Թեմա 1

Բնութագրել «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը» և իմանալ դրանից օգտվելու կարգը:

«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը» ստեղծվել է ԱՊՀ երկրների մակարդակով առևտրում տեխնիկական խոչընդոտները վերացնելու նպատակով և գործում է միջպետական «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» որպես արտադրանքի խմբերի դասակարգիչ: Դասակարգիչը միանշանակ չի նույնականացնում կոնկրետ արտադրատեսակը, այլ նույնականացնում է արտադրատեսակի խումբը, որը դեռևս կարելի է դասակարգել ավելի ստորադաս խմբերի: Դասակարգման օբյեկտները կոդավորված են 9 նիշանոց կոդով: Կոդի առաջին 2 նիշերը հատկացված են դասակարգման խմբին (01-97): 3-րդ 2 նիշերը հատկացված են ենթախմբերին (01-09): Դրան հաջորդող 2 նիշերը նկարագրում են ենթախմբում ընդգրկված ավելի փոքր խմբերը (10-90): Կոդի հաջորդ երեք նիշերը հատկացված են դասակարգման ստորադաս խմբում ընդգրկված արտադրատեսակներին (100-900): Դասակարգիչը ընդգրկում է նաև «Չափի միավոր» սյունակը, որտեղ նշվում է տվյալ արտադրատեսակի չափի միավորի կոդը:

Թեմա 2

Նկարագրել EAN կոդերի կառուցվածքը: Իմանալ ստուգիչ թվերի հաշվարկման ձևը տարբեր ապրանքատեսակների վրա զետեղված գծիկային կոդերի միջոցով:

Ապրանքների համարակալման միջազգային ընկերությունը (EAN INTERNATIONAL) տարբեր երկրների միջև կատարվող ապրանքային առևտրի ընթացքում, արտադրող երկրի, արտադրող կազմակերպության և ապրանքատեսակի մասին տեղեկատվության կոդավորման և փոխանցման ավտոմատացման նպատակով ստեղծել է տարբեր համակարգեր (EAN 13 և EAN 8): EAN 8-ը օգտագործվում է այն դեպքում, երբ ապրանքների եզրաչափերը թույլ չեն տալիս օգտագործել EAN 13-ը: Կոդի նիշերի համարակալումը կատարվում է աջից ձախ: Այսինքն, աջ կողմում առաջին դիրքը ստուգիչ թվի կարգն է: Ստուգիչ թիվը հաշվարկում են հետևյալ կերպ.

- գումարում են 2,4,6,8,10,12-րդ դիրքերի կոդի նիշերը,
- ստացված թիվը բազմապատկում են 3-ով,
- գումարում են բոլոր բաց թողնված դիրքերի թվերը,
- 2-րդ կետի արդյունքը գումարում են 3-րդ կետի արդյունքին,
- 4-րդ կետի արդյունքին գումարում են այն ամենափոքր թիվը, որը ստացված արդյունքը դարձնում է տասնապատիկ:

Այդ ամենափոքր թիվը հենց ստուգիչ թիվն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 2. ԻՍԱՆԱԼ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * չափման միջոցներ

Թեմա 1

Ընդհանուր տեղեկություններ չափագիտության մասին: Չափագիտությունը որպես գիտություն չափումների մասին:

Թեմա 2

Չափումների տեսակները և մեծությունների չափման սանդղակները:

ԳՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 1.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՀ օրենքը «Չափումների միասնականության ապահովման մասին»

Թեմա 1

Քննարկել «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը: Նշել ընդհանուր դրույթները, չափումների միասնականության ապահովման գործընթացի կազմակերպումը: «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է չափումների միասնականության ապակշիռական իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավասությունները և խպատասխանատվությունը, կարգավորում է հարաբերությունները չափումների միասնականության ապահովման բնագավառում և ուղղված է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև տնտեսության մեջ չափումների հավաստիության ապահովմանը:

Թեմա 2

Նկարագրել պետական չափագիտական հսկողությունը և վերահսկողությունը: Իմանալ պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար:

Պետական չափագիտական հսկողության տեսակներն են.

- չափման միջոցների պետական փորձարկումները, տեսակի հաստատումը, հաստատված տեսակին համապատասխանության փորձարկումները,
- չափման միջոցների ստուգաչափումը և չափագիտական վկայագրումը,
- չափման միջոցների արտադրության, նորոգման գործունեության լիցենզավորումը,
- չափման միջոցների ստուգաճշտում, չափումների կատարման մեթոդիկաների վկայագրում իրականացնող իրվաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրումը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * չափիչ սարքեր
- * պաստառներ

Թեմա 1

Չափման տեսակների դասակարգումը:

Թեմա 2

Ֆիզիկական մեծությունների միավորների համակարգը. հիմնական, լրացուցիչ և ածանցյալ միավորներ:

ԳՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 2.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՀ Կառավարության թիվ 260 որոշումը
- * պաստառներ

Թեմա 1

Իմանալ և նկարագրել չափի և կշռի Միջազգային գլխավոր համաժողովի կողմից ընդունված համակարգի միավորները:

Չափի և կշռի միջազգային գլխավոր համաժողովի կողմից ընդունված միավորների միջազգային համակարգի միավորներն են. երկարության միավոր՝ մետր, զանգվածի միավոր՝ կիլոգրամ, ժամանակի միավոր՝ վայրկյան, էլեկտրական հոսանքի միավոր՝ Ամպեր, թերմոդինամիկական ջերմաստիճանի միավոր՝ Կելվին, նյութի քանակության միավոր՝ մոլ, լույսի ուժի միավոր՝ կանդելա:

Թեմա 2

Նկարագրել հատուկ անվանումներ ունեցող ածանցյալ և լրացուցիչ միավորները, ախտանշանները և արտահամակարգային միավորները:

Հատուկ անվանումներ ունեցող ածանցյալ և լրացուցիչ միավորներն են. ռադիան, ստեռադիան, Դերց, Նյուտոն, Պասկալ, Ջոուլ, Վատտ, Կուլոն, Վոլտ, Ֆարադ, Օմ, Սիմենս, Վեբեր, Տեսլա, Դենրի, Ցելցիուսի ջերմաստիճան, յուլեն, յուքս, Բեքերել, Գրեյ, Զիվերտ:

Նախաձանցներն են. իոտտա, զեստտա, էքսա, պետտա, տերա, գիգա, մեգա, կիլո, հեկտո, դեկա, դեցի, սանտի, միլի, միկրո, մանո, պիկո, ֆեմտո, ատտո, զեպտո, իոկտո:

Արտահամակարգային միավորներն են. տոննա, ռուպե, ժամ, օր, աստիճան, լիտր, լուսային տարի, պարսեկ, դիօպտրիա, հեկտար, էլեկտրոն վոլտ, վոլտ ամպեր, տոկոս, պրոմիլե, միլիոներորդ մաս, բել, դեցիբել:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * ստանդարտներ

Թեմա 1

ՀՀ-ում կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորները, կիրառման համար ժամանակավորապես թույլատրելի և կիրառումից հանելու ենթակա արտահամակարգային միավորները:

Թեմա 2

Միավորների միջազգային համակարգի հիմնական մեծությունների սահմանումները, մեծությունների միավորների կիրառման և գրելաձևի կանոնները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 3.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՀ Կառավարության թիվ 127 որոշումը
- * Հայաստանի ստանդարտ ՀՍՏ 8.11-94

Թեմա 1

Բննարկել ՀՀ Կառավարության թիվ 127 որոշումը՝ կիրառման համար ժամանակավորապես թույլատրելի արտահամակարգային միավորները:

Կիրառման համար ժամանակավորապես թույլատրելի արտահամակարգի շրջային միավորներն են. ծովային մղոն, ֆուտ, կարատ, տեքս, հանգույց, Գալ, Նեպեր, բար սնդիկի սյան միլիմետր:

Թեմա 2

Իմանալ և բնութագրել չափագիտության տերմինները և սահմանումները ըստ Հայաստանի ստանդարտ ՀՍՏ 8.11-94: Չափումների միասնականության ապահովման ազգային համակարգ: Չափագիտություն: Տերմիններ և սահմանումներ:

Մեծություն՝ նյութի, մարմնի կամ երևույթի հատկություն, որը կարելի է տարբերել որակապես և որոշել քանակապես:

Հիմնական մեծություն՝ մեծությունների տվյալ համակարգի որևէ մեծություն, որը պայմանականորեն անկախ է մյուս մեծություններից:

Ածանցյալ մեծություն՝ մեծություն, որը մեծությունների տվյալ համակարգում որոշվել է որպես ֆունկցիա տվյալ համակարգի հիմնական մեծություններից:

Միավորների միջազգային համակարգ (SI)՝ միավորների կոհերանտ համակարգ, որը ընդունվել և առաջարկվել է չափի և կշռի Գլխավոր համաժողովի կողմից:

Հիմնական միավոր՝ մեծությունների տվյալ համակարգի հիմնական մեծության միավորը:

Ածանցյալ միավոր՝ միավորների համակարգի ածանցյալ մեծության միավորը ստացվում է մի հավասարմամբ, որն այդ միավորը կապում է հիմնական միավորների կամ հիմնական և արդեն որոշակի ածանցյալների հետ:

Չափագիտություն՝ գիտություն չափումների, նրանց միասնականության ապահովման, պահանջվող ճշգրտությանը հասնելու եղանակների և միջոցների մասին:
Չափում՝ մեծության արժեքի որոշման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * չափման միջոցներ
- * պաստառներ

Թեմա 1

Չափման միջոցների տեսակները և էտալոնները

Թեմա 2

Չափման միջոցների ստուգաչափումը և ստուգաճշտումը: Ստուգաչափման մեթոդները և սխեմաները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * չափման միջոցներ

Թեմա 1

Չափման միջոցների կանոնավոր սխալանքները:

Թեմա 2

Չափման միջոցների վիճակագրական սխալանքները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 6.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ Օրենքը

Թեմա 1

Չափագիտության գործունեության իրավական հիմքերը: Չափումների միասնականության ապահովումը և գործընթացի կազմակերպումը:

Թեմա 2

Պետական չափագիտական հսկողությունը և վերահսկողությունը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 7.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ Օրենքը

Թեմա 1

Հայաստանի Հանրապետություն չափման միջոցների ներմուծման կարգը:

Թեմա 2

Օտարվող ապրանքների և փաթեթավորված, չափաճարված ապրանքների պետական չափագիտական վերահսկողության իրականացման կարգը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 8.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * չափիչ միջոցներ և սարքեր

Թեմա 1

Չափման միջոցների թողարկման, չափումների կատարման մեթոդիկաների, էտալոնների, տիպային և աշխատանքային չափման միջոցների վիճակի, կիրառման և չափագիտական նորմերի պահպանման պետական վերահսկողության իրականացման կարգը:

Թեմա 2

Չափագիտական միջազգային կազմակերպությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 4.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ստանդարտներ
- * Հայաստանի դասակարգիչ ՀԴ 004-2001

Թեմա 1

Չափման միջոցների ստուգաչափման կազմակերպումը և կատարման կարգը` համաձայն ՀՍՏ 8.3-2001:

Չափման միջոցները ստուգաչափման պետք է ներկայացվեն փաթեթավորումից հանված վիճակում: Կից ներկայացվում են չափման միջոցների տեխնիկական նկարագիրը, շահագործման հրահանգը, ստուգաչափման մեթոդիկան և վերջին ստուգաչափման վկայականը:

Ստուգաչափման համար չափման միջոցների առբերումը պետք է ապահովեն չափման միջոցները տնօրինողները:

Ստուգաչափումը իրականացվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կազմած գրաֆիկների հիման վրա:

Թեմա 2

Չափման և հաշվի միավորների դասակարգչից ՀԴ 004-2001 օգտվելու ձևը:

Չափման և հաշվի միավորների դասակարգչում չափման միավորները բաժանվում են յոթ խմբի.

- երկարության միավորներ,
- մակերեսի միավորներ,
- ծավալի միավորներ,
- զանգվածի միավորներ,
- միավորներ տեխնիկական,
- ժամանակի միավորներ,
- միավորներ տնտեսական:

Միջազգային, միջպետական և ազգային չափման միավորները տրված են դասակարգչի 1 աղյուսակում: Լայն կիրառում չունեցող միջազգային չափման միավորները տրված են Ա հավելվածում:

ԱՐԴՅՈՒՆՔ 3. ԻՄԱՆԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * սերտիֆիկատներ
- * միջազգային համաձայնագիրը՝ առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման մասին

Թեմա 1

Համապատասխանության հավաստման էությունը, նպատակները և իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում:

Թեմա 2

Համապատասխանության հավաստումը և տեխնիկական խոչընդոտներն առևտրում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ՀՀ Օրենքը «Համապատասխանության գնահատման մասին»
- * պաստառներ

Թեմա 1

Արտադրանքի համապատասխանության հավաստման սկզբունքները և իրականացման կանոնները:

Թեմա 2

Սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 1.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը
- * Սերտիֆիկացման և հայտարարման սխեմաները ըստ ՀՀ Կառավարության Որոշման

Թեմա 1

Քննարկել «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը:
 «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է սահմանված պահանջներին արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների, որակի և բնապահպանական համակարգերի, անձանց համապատասխանության պարտադիր և կամավոր հավաստման աշխատանքների կազմակերպումը, սահմանում է այդ բնագավառում համապատասխանության հավաստման գործընթացին մասնակից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման, սահմանված պահանջներին արտադրանքի, ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության իրավական հիմքերն ու կարգը, գույքային շրջանառությունում արտադրանքի իրացման պայմանները, համապատասխանության հավաստման մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Ըստ օրանքի, համապատասխանության գնահատման ձևերն են. համապատասխանության հավաստումը, հավատարմագրումը, տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունը:

Թեմա 2

Իմանալ և նկարագրել սերտիֆիկացման և հայտարարման սխեմաները՝ ըստ ՀՀ Կառավարության որոշման:
 Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը հավաստելու համար կիրառվում են համապատասխանության պարտադիր հավաստման սխեմաներ, որոնցից յուրաքանչյուրը գործողությունների և համապատասխանության հավաստման մասնակիցների կողմից դրանց կատարման պայմանների ամբողջություն է: Տեխնիկական կանոնակարգերում նույն արտադրանքի համար, համաձայն համարժեք ապացուցելիության աստիճանի, կարող են սահմանվել մի քանի սխեմաներ: Սերտիֆիկացման սխեմաները նշված են «Ս» տառով, դրանք 8-ն են:
 Հայտարարագրման սխեմաները նշված են «Հ» տառով, դրանք 5-ն են Հայտատու (արտադրող, վաճառող) հայտարարագրի կամ սերտիֆիկատի հիման վրա արտադրանքը մակնշում է համապատասխանության նշանով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * սերտիֆիկացման նորմատիվ փաստաթղթեր
- * պաստառներ

Թեմա 1

Արտադրանքի սերտիֆիկացման կարգը և նորմատիվ փաստաթղթերը:

Թեմա 2

Սերտիֆիկացման սխեմաները և համապատասխանության նշանը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * սերտիֆիկատներ
- * ապրանքատեսակներ

Թեմա 1

Արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագիրը:

Թեմա 2

Արտադրանքի համապատասխանության մասին հայտարարագրման սխեմաները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 2.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՍՏ 5.3-2004 ստանդարտը
- * պաստառներ

Թեմա 1

Բնութագրել համապատասխանության հավաստման համակարգը: Արտադրանքի սերտիֆիկացում: Զննարկել ՀՍՏ 5.3-2004 ստանդարտը և նշել դրա կիրառման ոլորտը: Իմանալ նորմատիվ վկայակոչումները, սահմանումները, ընդհանուր դրույթները, սերտիֆիկացվող արտադրանքի նորմատիվ փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

5.3-2004 ստանդարտով սահմանվում է ՀՀ համապատասխանության հավաստման համակարգում արտադրանքի սերտիֆիկացման ընդհանուր գործընթացները: Այն կարող է անմիջականորեն կիրառվել կոնկրետ արտադրանքի կամ արտադրանքի խմբերի պարտադիր և կամավոր սերտիֆիկացման ժամանակ: Համակարգի արտադրանքի սերտիֆիկացումն իրականացվում է պարտադիր կամ կամավոր: Արտադրանքի պարտադիր սերտիֆիկացումն իրականացվում է ըստ տվյալ արտադրանքի խմբերի վրա տարածվող տեխնիկական կանոնակարգով, իսկ դրա բացակայության դեպքում օրենքով տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ նորմերին համապատասխան արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին և ՀՀ օրենսդրությանը և սույն ստանդարտով ընթացակարգերին համապատասխան:

Թեմա 2

Իմանալ արտադրանքի սերտիֆիկացման կարգը, սերտիֆիկացված արտադրանքի համապատասխանության հսկողությունը, սերտիֆիկատի գործողության կասեցումը և դադարեցումը, սերտիֆիկացման արդյունքների մասին տեղեկատվությունը:

Արտադրանքի սերտիֆիկացումն իրականացվում է հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների կողմից: Արտադրանքի պարտադիր սերտիֆիկացման ժամանակ սերտիֆիկացման մարմինը հայտատուի համաձայնությամբ կիրառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխանության հավաստման սխեմաներից որևէ մեկը, հաշվի առնելով արտադրության, փորձարկումների, տվյալ արտադրանքի մատակարարման և օգտագործման առանձնահատկություններն, ինչպես նաև արտադրանքի անվտանգության ապահովման ռիսկի աստիճանը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * սերտիֆիկատներ
- * ապրանքատեսակներ

Թեմա 1
Օտարերկրյա սերտիֆիկատների և համապատասխանության նշանները ճանաչումը:

Թեմա 2
Սերտիֆիկացված արտադրանքի համապատասխանության հսկողությունը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 6.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ
- * ստանդարտներ

Թեմա 1
ԻՍՕ-ի գործունեությունը սերտիֆիկացման ոլորտում:

Թեմա 2
ՄԷՀ-ի գործունեությունը սերտիֆիկացման ոլորտում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 7.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ

Թեմա 1
Սերտիֆիկացումը Եվրոմիությունում:

Թեմա 2
Սերտիֆիկացումը ԱՊՀ երկրներում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 8.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * պաստառներ

Թեմա 1
Սերտիֆիկացումը Գերմանիայում և Ֆրանսիայում:

Թեմա 2
Սերտիֆիկացումը Ճապոնիայում և ԱՄՆ-ում:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 9.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1
Հանրային սննդի ծառայությունների, հագուստի, քիմնաքրման և ներկման սերտիֆիկացում:

Թեմա 2
Էկոլոգիական սերտիֆիկացում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 3.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՍՏ 5.3-2004 ստանդարտը

Թեմա 1

Իմանալ և նկարագրել սերտիֆիկացման սխեմաները, սերտիֆիկացման փաստաթղթերի ձևերը (հայտ, որոշում, մերժում, նմուշառման ակտ, արտադրանքի արտադրության վիճակի վերլուծության կամ որակի կառավարման համակարգի կարգը, կամ դրա գնահատման տիպային ծրագիր, համապատասխանության հսկողության ակտ և այլն):

Սերտիֆիկացման փաստաթղթերի ձևերը տրված են ՀՍՍ 5.3 ստանդարտի հավելվածներում (հայտ, որոշում, մերժում, նմուշառման ակտ, արտադրանքի արտադրության վիճակի վերլուծության կամ որակի կառավարման համակարգերի կարգը, դրա գնահատման տիպային ծրագիր, համապատասխանության հսկողության ակտ և այլն):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 4.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ՀՍՍ 5.9-2000 ստանդարտը
- * ԻՍՕ 22000 ստանդարտը

Թեմա 1

Բնութագրել համապատասխանության հավաստման համակարգը և ծառայությունների սերտիֆիկացումը: Քննարկել ՀՍՍ 5.9-2000 և ՀՍՍ ԻՍՕ 14000 ստանդարտները:

ՀՍՍ 5.9-2004 ստանդարտով սահմանվում են ՀՀ համապատասխանության հավաստման համակարգում ծառայությունների սերտիֆիկացման ընդհանուր գործընթացները: Սույն ստանդարտը նախատեսված է կիրառման սերտիֆիկացման մարմինների, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների, հայտատուների, ինչպես նաև համակարգի գործունեությանը մասնակից այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Ծառայությունների սերտիֆիկացման կարգը ներառում է.

- հայտատուի կողմից հայտի ներկայացում սերտիֆիկացման մարմին,
- հայտի քննարկում սերտիֆիկացման մարմնի կողմից,
- ծառայության բնութագրերի կան որակի կառավարման համակարգի գնահատում սերտիֆիկացման մարմնի կողմից,
- ծառայության արդյունքի փորձարկումների կատարում
- փորձարկման և գնահատման արդյունքների ամփոփում և սերտիֆիկատի հանձնում հայտատուին,
- համապատասխանության հսկողություն:

ՀՍՍ ԻՍՕ 14000 ստանդարտի համաձայն, արտադրանքը պետք է անվտանգ լինի սպառողի և շրջակա միջավայրի համար: Ստանդարտի բոլոր պահանջները նախատեսված են էկոլոգիական կառավարման ցանկացած համակարգում այն ներառելու համար: Այվձն կարող է կիրառվել ցանկացած կազմակերպությունում, որը ցանկանում է.

- ներդնել, պահպանել և կատարելագործել շրջակա միջավայրի կառավարման համակարգը,
- հանդգնել նրանում, որ համակարգը պատասխանում է իր սահմանած էկոլոգիական քաղաքականության համակարգին,
- ապացուցել համապատասխանությունը սույն ստանդարտին:

ԱՐԴՅՈՒՆՔ 4. ԻՍԱՆԱԼ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Որակի հասկացությունը: Որակի ղեկավարման և ապահովման տերմինները և սահմանումները:

Թեմա 2

ԻՍՕ 9000 շարքի ստանդարտների սկզբունքները, ներդրման անհրաժեշտությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 1.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Իմանալ որակի կառավարման և որակի ապահովման տերմինները և սահմանումները ըստ ՀՍՏ ԻՍՕ 9000-2002 ստանդարտի:

Ստանդարտի սահմանումներն են.

Արտադրանքը սահմանված է որպես գործընթացի արդյունք:

Գործընթացը սահմանված է որպես մուտքերը ելքերի փոխարկող գործունեության փոխկապակցված կամ փոխազդող տեսակների ամբողջություն:

Որակ՝ աստիճան, որով հատկանշական բնութագրերի ամբողջությունը, բավարարում է պահանջները:

Պահանջ՝ պահանջումը կամ սպասելիք, որը սահմանված է, սովորաբար ենթադրվում է կամ պարտադիր է:

Կառավարման համակարգ՝ համակարգ քաղաքականության և նպատակների մշակման և այդ նպատակներին հասնելու համար:

Սպառող՝ կազմակերպություն կամ անձ, որն ստանում է արտադրանք:

Շահագրգիռ կողմ՝ անձ կամ խումբ, որը շահագրգռված է կազմակերպության գործունեությամբ կամ հաջողությամբ:

Թեմա 2

Քննարկել որակի կառավարման համակարգերի նկատմամբ պահանջների վերաբերյալ ստանդարտները. ՀՍՏ ԻՍՕ 9001-2002, ՀՍՏ ԻՍՕ 9004-2002:

ՀՍՏ ԻՍՕ 9001 ստանդարտով սահմանված են որակի համակարգի նկատմամբ պահանջներ /տարրեր/, որոնք ներառում են.

- ղեկավարության պատասխանատվությունը,
- որակի համակարգը,
- պայմանագրի վերլուծությունը,
- նախագծման կառավարումը,
- փաստաթղթերի և տվյալների կառավարումը,
- գնումները,
- սպառողի կողմից մատակարարվող արտադրանքի կառավարումը,
- արտադրանքի նույնականացումը և հետևելիությունը,
- գործընթացի կառավարումը,
- վերահսկման և փորձարկումների կառավարումը,
- վերահսկման, չափումների և փորձարկումների համախառն պատասխան սարքավորումների կառավարումը,
- վերահսկման և փորձարկման կարգավիճակը,
- անհամապատասխան արտադրանքի կառավարումը,
- ուղիչ և կանխարգելիչ գործողությունները,
- արտադրանքի հետ վարվելը,
- պահեստավորումը,
- փաթեթավորումը,
- պահպանումը և առաքումը,
- որակի մասին գրանցումների կառավարումը,
- որակի ներքին աուդիտները,

- ուսուցումը,
- սպասարկումը,
- վիճակագրական եղանակները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Որակի օղակը և տարրերը ըստ ԻՍՕ 9000 շարքի ստանդարտների:

Թեմա 2

Որակի համակարգերի տարրերի ներդրումը. ղեկավարության պատասխանատվությունը, որակի համակարգը, պայմանագրի վերլուծությունը, նախագծման կառավարումը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Որակի համակարգերի տարրերի ներդրումը. փաստաթղթերի և տվյալների կառավարման համար անհրաժեշտ համակարգը, գնումները, սպառողի կողմից մատակարարվող արտադրանքի կառավարումը, արտադրանքի նույնականացումը և հետևելիությունը:

Թեմա 2

Որակի համակարգերի տարրերի ներդրումը. գործընթացների կառավարումը, վերահսկման և փորձարկումների կատարումը, վերահսկման, չափումների և փորձարկումների կատարման համապատասխան սարքավորումների կառավարումը, վերահսկման և փորձարկումների կատարման կարգավիճակը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Որակի համակարգերի տարրերի ներդրումը. ուղղիչ և կանխարգելիչ գուծողություններ, արտադրանքի հետ վարվելը, պահեստավորումը, փաթեթավորումը, պահումը և առաքումը, որակի մասին գրանցումների կառավարումը:

Թեմա 2

Որակի համակարգերի տարրերի ներդրումը. որակի ներքին աուդիտներ, ուսուցումը, սպասարկումը, վիճակագրական եղանակները:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5.

Դասավանդման օժանդակ նյութեր.

- * ստանդարտներ
- * պաստառներ

Թեմա 1

Որակի համակարգերի սերտիֆիկացում:

Թեմա 2

Որակի աուդիտի նպատակները և պատասխանատվությունը: Որակի մրցանակները և ինքնագնահատման գործընթացը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 2.

Անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր.

- * ստանդարտներ. ՅՍ 5.7-2005, ՅՍ ԻՍՕ 19011-2005
- * պաստառներ

Թեմա 1

Քննարկել որակի համակարգերի սերտիֆիկացում (ՅՍ 5.7-2005) ստանդարտը:

ՅՍ 5.7 ստանդարտում սահմանվում են համապատասխանության հավաստման համակարգում որակի համակարգերի սերտիֆիկացման հիմնական սկզբունքները և ընթացակարգերը, դիտարկումների գրանցման ձևերը և ստուգումների արդյունքների ձևակերպումները: Ստանդարտը կիրառվում է որակի համակարգի հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների, ինչպես նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից որակի համակարգի կամավոր սերտիֆիկացում իրականացնելու ժամանակ:

Ըրակի համակարգի սերտիֆիկացումն իր մեջ ներառում է աշխատանքների կազմակերպման՝ նախասերտիֆիկացման փուլ և սերտիֆիկացման հետևյալ 3 փուլերը.

1. որակի համակարգի նախնական գնահատում
2. կազմակերպության որակի համակարգի ստուգում և գնահատում,
3. սերտիֆիկացված որակի համակարգի համապատասխանության հսկողություն:

Սերտիֆիկացման շրջանակներում օգտագործվող, գրանցվող և տրվող փաստաթղթերը, ինչպես նաև գրագրությունը /հայտեր, արձանագրություններ, ակտեր, սերտիֆիկատներ, նամակներ և այլն/ ձևակերպվում և վարվում է ազգային լեզվով: Հայտատուի ցանկությամբ, պայմանագրով, լրացուցիչ վճարմամբ, համապատասխանության սերտիֆիկատի օրինակներ կարող են տրվել տարբեր լեզուներով՝ պահպանելով բնագրաբնույթ տեքստը: Սերտիֆիկացման բոլոր մասնակիցները սերտիֆիկացման ժամանակ պետք և ապահովեն տեղեկատվության գաղտնիությունը:

Թեմա 2

Քննարկել որակի համակարգերի աուդիտ (ՅՍ ԻՍՕ 19011-2005) ստանդարտը: